ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«ՍԱՊԾ-18/05-1»

ք.Երևան «25» դեկտեմբերի 2018թ.

ՀՀ ԿԱ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի դեմս ղեկավար Գեորգի Ավետիսյանի, ով գործում է ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1730-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) և «ՄԱՎԱՍ գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Արմեն Սարգսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2019 թվականի ընթացքում ձեռքբերվելիք լաբորատոր փորձաքննության ծառայության տեսակները և գնացուցակը, 2019 թվականի ընթացքում ձեռքբերվելիք լաբորատոր փորձաքննության ծառայությունների իրականացման համար փորձարկման լաբորատորիաների մրցույթի հայտարարության և հրավերի տեքստերը չեն հաստատվել, ուստի անհրաժեշտ է 2017 թվականի դեկտեմբերի 25-ին կնքված փորձաքննության ծառայությունների մատուցման թիվ «ՍԱՊԾ-18/05» շրջանակային համաձայնագրի 7.1-րդ կետում շրջանակային համաձայնագրի գործողության ժամկետ սահմանել մինչև 2019 թվականի ընթացքում ձեռքբերվելիք լաբորատոր փորձաքննության ծառայությունների մատուցման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերի կնքումը:

2. Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ակցեպտը ստանալու պահից:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԿԱ սննդամթերքի անվտանգության	«ՄԱՎԱՍ գրուպ » ՍՊԸ
տեսչական մարմին	ք.Երևան, Արշակունյաց 1 նրբ.28տ.
ք.Երևան,Կոմիտաս 49/2	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 1930005759540100
ՀՀ 900013404026	Արմեն Սարգսյան
ՀՎՀՀ 00454227	
Գեորգի Ավետիսյան	